

© Association of Judges of the RA,
http://www.judge.am/index.php?option=com_content&view=category&layout=blog&id=36&Itemid=60&lang=en. [Translation already published in Collection of judgments of ECHR in Volume 5, 2008.] Permission to re-publish this translation has been granted for the sole purpose of its inclusion in the Court's database HUDOC.

CASE OF MENESHEVA v. RUSSIA - [Armenian Translation] by the Association of Judges of the RA

ՄԵՆԵՇԵՎԱՆ ԸՆԴՂԵՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ գործով

ՎճԻՌ

Ստրասբուրգ, 9 մարտի 2006թ.

Մենեշևա ընդդեմ Ռուսաստանի գործով՝

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք), որպես Պալատ նիստ գումարելով հետևյալ կազմով՝

Նախագահ՝

պրն C.L. ROZAKIS,

Դատավորներ՝

տկն S. BOTOCHAROVA,

պրն A. KOVLER,

տկն E. STEINER,

պրն K. HAJIYEV,

պրն D. SPIELMANN,

պրն S.E. JEBENS,

և *Բաժանմունքի քարտուղար՝*

պրն S. NIELSEN,

դռնփակ խորհրդակցելով 2006թ. փետրվարի 14-ին,

կայացրեց հետևյալ վճիռը, որը հաստատվեց նույն օրը:

ՓԱՍՏԵՐԸ

1. ԳՈՐԾԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

8. Դիմողը ծնվել է 1979թ. և բնակվում է Բատայսկում՝ Ռոստովի մարզ:

9. 1999թ. փետրվարի 11-ին ոստիկանությունը քրեական գործ է հարուցել մահվան փաստով, և սպանության մեջ կասկածվում էր Լ.-ն: Ենթադրվել է, որ Լ.-ն դիմողի ընկերն էր:

10. Նույն օրը ոստիկանությունը որոշել է հետախուզել դիմողի բնակարանը՝ Լ.-ին հայտնաբերելու համար:

11. 1999թ. փետրվարի 12-ին՝ մոտավորապես կեսգիշերին, ոստիկանությունը ժամանել է դիմողի բնակարան խուզարկություն կատարելու ակնհայտ մտադրությամբ, սակայն քանի որ վերջիններս խուզարկության թույլտվություն չեն ներկայացրել, դիմողը հրաժարվել է նրանց ներս թողնել:

12. Հաջորդ օրը՝ 1999թ. փետրվարի 13-ին, մոտավորապես ժամը 16.30-ին քաղաքացիական հագուստով երեք ոստիկան սպասել են դիմողին նրա դռան մոտ: Նրանցից մեկը ներկայացրել է ոստիկանության մայոր Ս.-ի վկայականը և պահանջել թույլ տալ մտնել դիմողի բնակարան: Քանի որ նրանք այս անգամ ևս չեն ունեցել թույլտվություն, դիմողը թույլ չի տվել մտնել բնակարան: Ոստիկանները պնդել են իրենց պահանջը, և դիմողը նրանց հետ թեժ վեճի է բռնվել, որի արդյունքում երկու կողմերն էլ թույլ են տվել սպառնալիքներ և վիրավորանքներ: Ի վերջո, ոստիկանության մայորը որոշել է ձերբակալել դիմողին: Նրա ենթականեր Պ.-ն և Բ.-ն բռնել են դիմողին, շրջել նրան գլխիվայր և, շարունակելով վախեցնել՝ մտցրել առանց ոստիկանական տարբերանշանների մի մեքենայի մեջ: Դիմակայության ընթացքում դիմողին հարվածել են դռանը, որի արդյունքում նա վնասել է ոտքն ու գլուխը: Դիմողը գլուխը հարվածել է մեքենային նաև այն պահին, երբ նրան մտցնում էին մեքենայի մեջ: Ճանապարհին մայոր Ս.-ն սպառնացել է դիմողին՝ ասելով, որ ինքը ծեծի է ենթարկելու վերջինիս ընտանիքի անդամներին, իսկ խուզարկության ժամանակ կողոպտելու է նրա բնակարանը:

13. Դիմողին տարել են Դոնի Ռոստովի ոստիկանության ժելեզնոդորոժնիի շրջանային բաժանմունք: Դիմողին չեն տեղեկացրել, թե իրեն ինչու են բերել ոստիկանության բաժանմունք: Համաձայն Կառավարության կողմից ավելի ուշ տրված հաղորդման՝ անհրաժեշտ է եղել կազմել դիմողին ոստիկանություն բերման ենթարկելու արձանագրությունը: Այդուհանդերձ, ոստիկանության արձանագրության մեջ նշվել է, որ նրան ոստիկանություն են բերել հարցաքննելու նպատակով:

14. Ոստիկանության բաժանմունքում դիմողին տարել են քրեական հետախուզության վարչության պետի տեղակալի մոտ, ով նրան հարցեր է ուղղել «ամուսնու» գտնվելու վայրի մասին: Դիմողը հայտնել է նրան, որ երբևէ ամուսնացած չի եղել, որից հետո նա ձեռքերով հարվածել է դիմողին, իսկ մի քանի այլ ոստիկաններ սկսել են նրան ծեծել: Մոտ երկու ժամ նրանք հարվածներ են հասցրել

դիմողի ուղքերին, չպրտել են նրան սենյակով մեկ, հարվածներ են հասցրել ռետինե մահակով և նրա գլուխը խփել պատերին: Խփելու ընթացքում նրանք դիմողին մեղադրել են ստախոսության մեջ, վիրավորել նրան և սպառնացել բռնաբարել, ինչպես նաև բռնություն գործադրել նրա ընտանիքի անդամների նկատմամբ:

15. Դիմողը խնդրել է, որպեսզի իր ազգականներին տեղյակ պահեն իրեն արգելանքի վերցնելու մասին: Նա նաև խնդրել է, որպեսզի իրեն տրամադրեն բուժօգնություն և թույլ տան հաղորդակցվել փաստաբանի հետ, սակայն նրա բոլոր խնդրանքները մերժվել են:

16. Դիմողի հարցաքննությունից հետո ժեղզնոդորոժնի շրջանի դատախազի տեղակալ Դ.-ն այցելել է ոստիկանության բաժանմունք և մտել այն սենյակ, որտեղ պահվում էր դիմողը: Դիմողն օգտագործել է ընձեռված հնարավորությունը և պատմել իրեն արգելանքի վերցնելու և ծեծելու մասին: Տեղակալը լսել է դիմողին և խորհուրդ տվել իրեն բողոք գրել վատ վերաբերմունքի մասին: Դիմողը հայտարարել է, որ գրել է իր բողոքը մի կտոր թղթի վրա և այն հանձնել Դ.-ին:

17. Դրանից հետո, մոտավորապես ժամը 7.00-ին, դիմողին տարել են տուն, որովհետև ոստիկանությունը ցանկացել է խուզարկել նրա բնակարանը: Որպես վկա ներգրավված Զ.-ին՝ դիմողի հարևանին, ասել են, որ փնտրում են Լ.-ին, և նա հաստատել է, որ Լ.-ն այդտեղ չի ապրում: Ոստիկանությունը պնդել է բնակարանը խուզարկելու պահանջը, սակայն դարձյալ պարզվել է, որ նրանք չունեն խուզարկության թույլտվություն, և դիմողը դարձյալ նրանց ներս չի թողել: Կարճատև դիմադրությունից հետո դիմողին դարձյալ բռնել են և գլխիվայր տարել դեպի մեքենան՝ հարվածելով նրա գլուխը պատերին և աստիճանավանդակին: Նրան կրկին տարել են ժեղզնոդորոժնի շրջանային ոստիկանության բաժանմունք, որտեղ նրան դարձյալ ծեծել են, վախեցրել և մեղադրել Լ.-ին թաքցնելու մեջ: Հետո նրան փակել են բանտախցում:

18. Բանտախցում դիմողին պահել են մինչև 1999թ. փետրվարի 14-ի ժամը 14.30-ը: Չնայած այս փաստը երբևէ չի վիճարկվել, այնուհանդերձ, դիմողի ձերբակալման տևողության վերաբերյալ որևէ գրառում չի հայտնաբերվել:

19. 1999թ. փետրվարի 14-ին՝ մոտավորապես ժամը 14.00-ին, դիմողին ենթարկել են անձնական խուզարկության և առգրավել նրա բնակարանի բանալիները: Նույն օրն ավելի ուշ ժեղզնոդորոժնի շրջանի դատախազը տվել է դիմողի բնակարանը խուզարկելու թույլտվություն, որից հետո խուզարկությունը կատարվել է:

20. Նույն օրը դիմողին բերել են մի պաշտոնատար անձի մոտ, որն առանց ներկայանալու ասել է նրան «հինգ օր»: Հետագայում դիմողն իմացել է, որ այդ անձը եղել է ժեղզնոդորոժնի շրջանի դատարանի դատավոր Պ.-ն, և որ «հինգ օրը»

նշանակել է հնգօրյա կալանք՝ ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու վարչական իրավախախտման համար: Նույն օրը դիմողին տարել են վարչական կալանքի համար նախատեսված հատուկ կենտրոն:

21. 1999թ. փետրվարի 18-ին, երբ հնգօրյա կալանքից հետո դիմողն ազատ է արձակվել, ոստիկանության մայոր Ս.-ն, ով նրան ձերբակալել էր, նրան դուրս է գրել կալանավայրից, տարել Ժելեզնոդորոժնի շրջանի ոստիկանության բաժանմունք և հրամայել լվանալ ոստիկանության բաժանմունքի միջանցքի հատակը: Երբ նա ավարտել է, մայորը նրան ազատ է արձակել:

22. 1999թ. փետրվարի 19-ին դիմողը բժիշկ փորձագետի կողմից ենթարկվել է դատական փորձաքննության, որը հաստատել է, որ նա ունեցել է բազմաթիվ կապտուկներ դեմքի և ոտքերի վրա, վերքեր՝ դեմքի, ծնոտի, պարանոցի և ոտքերի վրա, ինչպես նաև վնասվածքային այտուց՝ գլխի փափուկ հյուսվածքի վրա:

1. Վատ վերաբերմունքին և ապօրինի ձերբակալմանն առնչվող վարույթը

23. 1999թ. մարտի 11-ին Ռոստովի մարզի Մարդու իրավունքների լիազորման ծառի դիմողի բողոք է ներկայացրել Ռոստովի մարզի ներքին գործերի վարչության պետին և մեկ այլ բողոք՝ Ռոստովի մարզի դատախազին: Նա միջնորդել էր քննություն անցկացնել ոստիկանության կողմից դիմողի նկատմամբ ենթադրյալ վատ վերաբերմունքի և նրա ենթադրյալ ապօրինի ձերբակալման կապակցությամբ: Բողոքներում մանրամասն ներկայացված էին փաստերի առնչությամբ դիմողի պնդումները և 1999թ. փետրվարի 19-ի փորձագիտական եզրակացությունը:

24. 1999թ. մարտի 15-ին դիմողը կրած վնասների հատուցման հայցադիմում է ներկայացրել Ռոստովի մարզի Բատայսկի քաղաքային դատարան՝ վիճարկելով ոստիկանության կողմից իր նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքը, իր ձերբակալումը և բնակարանի խուզարկությունը:

25. 1999թ. մարտի 30-ին Ռոստովի մարզի ներքին գործերի վարչության պետի տեղակալը տեղեկացրել է դիմողին, որ նրա միջնորդության առնչությամբ անցկացվել է ծառայողական քննություն, և որ նրա հայտարարությունները ճանաչվել են անհիմն: Ծառայողական քննության արդյունքներն ուղարկվել են դատախազություն: Այդուհանդերձ, նրան տեղեկացրել են նաև, որ ոստիկանության որոշ աշխատակիցներ ենթարկվել են կարգապահական պատասխանատվության: Մարդու իրավունքների լիազորը ստացել է նույն պատասխանը:

26. 1999թ. ապրիլի 12-ին դիմողը նամակ է ստացել Ժելեզնոդորոժնի շրջանի դատախազի տեղակալ Դ.-ից, ում նա հանդիպել էր ոստիկանության բաժանմունքում

(տե՛ս՝ կետ 16): Նա տեղեկացրել է դիմողին, որ ոստիկանության դեմ վերջինիս բողոքն իրեն ուղարկվել է Ռոստովի քաղաքային դատախազության կողմից, և որ ինքը որոշում է կայացրել ոստիկանության աշխատակիցների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

27. 1999թ. մայիսի 7-ին ժելեզնոդորոժնի շրջանի դատախազ Խ.-ն տեղեկացրել է Բատայսկի քաղաքային դատարանին, հավանաբար՝ պաշտոնական հարցմանն ի պատասխան, որ դիմողի ձերբակալման կամ կալանավորման առնչությամբ որևէ փաստաթուղթ չի հայտնաբերվել:

28. 1999թ. հունիսի 9-ին Ռոստով քաղաքի դատախազի տեղակալը հաստատել է այդ որոշումը:

29. 1999թ. դեկտեմբերի 22-ին Ռոստովի մարզի Բատայսկի քաղաքային դատարանը քննության է առել դիմողի բողոքը և որոշել, որ դիմողի բնակարանի խուզարկությունը, նախնական կալանքը և հնգօրյա կալանքն օրինական են եղել: Դատարանը գտել է, որ ոստիկանությունը գործել է օրենքի սահմաններում, ինչպես որ լիազորված է եղել դատախազության կողմից, և որ դա անհրաժեշտ է եղել սպանության գործով քննություն իրականացնելու համար: Ինչ վերաբերում է վատ վերաբերմունքի առնչությամբ արված պնդումներին, ապա դատարանը հիմնվել է ոստիկանության աշխատակիցների նկատմամբ քրեական գործի հարուցումը մերժելու մասին դատախազության որոշման և ոստիկանության ծառայողական քննության արդյունքում արված եզրակացության վրա, համաձայն որի՝ վատ վերաբերմունքի փաստ չի արձանագրվել: Դատարանը չի ընդունել փորձագետի եզրակացությունը՝ համարելով այն ոչ վերաբերելի, և որոշել, որ վատ վերաբերմունքի առնչությամբ արված պնդումներն անհիմն են:

30. 2000թ. փետրվարի 23-ին Ռոստովի մարզային դատարանը քննել է դիմողի բողոքը և Բատայսկի քաղաքային դատարանի որոշումը թողել անփոփոխ:

2. Վարչական կալանքի դեմ բողոքը

31. 1999թ. մարտի 15-ին դիմողը Ռոստովի մարզային դատարանում փորձել է վիճարկել իր հնգօրյա կալանքը: Նա պնդել է, որ չի իմացել այն պաշտոնատար անձի անունը, ով որոշում է կայացրել իր նկատմամբ վարչական կալանք կիրառելու մասին, և որ նա իրեն հարցեր չի տվել, չի տեղեկացրել իր դեմ եղած մեղադրանքի մասին, չի բացատրել իր մոտ բերելու պատճառը և չի տվել կալանքի մասին որոշման պատճենը:

32. 1999թ. մարտի 17-ին այն նույն դատավորը, ով որոշում էր կայացրել հնգօրյա կալանքի մասին, տեղեկացրել է դիմողին, որ որևէ սովորական բողոք չէր կարող բերվել այդ որոշման դեմ, և որ այն կարող էր վիճարկվել միայն դատախազի հատուկ բողոքի հիման վրա:

33. 1999թ. մարտի 25-ին դիմողը բողոք է ներկայացրել Ժելեզնոդորոժնի շրջանային դատարան և Ռոստովի մարզային դատարան: Նա բողոքարկել է քաղաքացիական դատավարության կարգով բերված իր բողոքն առանց քննության թողնելը:

34. 1999թ. մայիսի 26-ին Ռոստովի մարզային դատարանի նախագահը պատասխանել է դիմողին, որ գործով ձեռք բերված ապացույցների հիման վրա՝ նրա կալանքը եղել է օրինական, քանի որ այն կատարվել է վարչական իրավախախտման համար՝ նյութական և դատավարական իրավունքին համապատասխան:

35. 1999թ. հուլիսի 17-ին դիմողն իրեն վարչական կալանքի ենթարկելու մասին որոշման դեմ մեկ այլ բողոք է ներկայացրել Ռոստովի մարզային դատարան:

36. 1999թ. օգոստոսի 23-ին Ռոստովի մարզային դատարանի գործող նախագահը պատասխանել է, որ վարչական կալանքի դեմ ներկայացված բողոքներից ոչ մեկը չի բխում օրենքից:

37. Այնուհետև դիմողը, համապատասխանաբար, փորձել է բողոքարկել վերը նշված որոշումները, սակայն նրա բողոքներից ոչ մեկը վարույթ չի ընդունվել՝ այն հիմնավորմամբ, որ խնդրո առարկայի վրա դատարանների իրավասությունը չի տարածվում: Այս կապակցությամբ վերջին որոշումն ընդունվել է 1999թ. դեկտեմբերի 1-ին՝ Ռոստովի մարզային դատարանի կողմից:

3. Հետագա քննությունը

38. 2003թ. հունվարի 15-ին Ժելեզնոդորոժնի շրջանային դատախազությունը քրեական գործ է հարուցել դիմողի ձերբակալման, նրա կալանքի և նրա նկատմամբ վատ վերաբերումների փաստերի առթիվ:

39. 2003թ. փետրվարի 28-ին Ռոստովի մարզի դատախազը սեփական նախաձեռնությամբ միջնորդություն է ներկայացրել Ռոստովի մարզային դատարանի նախագահին՝ 1999թ. փետրվարի 14-ի որոշումը, որով դիմողը դատապարտվել էր վարչական իրավախախտման համար, բեկանելու պահանջով: Նա նշել է, որ ոստիկանությանը դիմադրություն ցույց տալը վարչական իրավախախտման կազմ չի պարունակել, քանի որ ոստիկանությունը գործել է ապօրինաբար, և որ ամեն դեպքում կալանքը եղել է անհամաչափ պատիժ:

40. 2003թ. մարտի 5-ին Ռոստովի մարզային դատարանի նախագահը բողոքը բավարարել է և բեկանել որոշումը՝ այն հիմքով, որ դիմողին դատապարտած դատավորը չի հետազոտել գործով առկա հանգամանքները և չի պարզել, թե արդյո՞ք դիմողը մեղավոր է եղել որևէ վարչական իրավախախտման համար, թե՛ ոչ: Հաստատվել է, որ որևէ ուժային դիմադրություն տեղի չի ունեցել, քանի որ, երբ դիմողը դիմադրություն է ցույց տվել, ոստիկանությունը կատարում էր քննություն, այլ ոչ թե հասարակական կարգի պահպանություն: Նաև հաստատվել է, որ ոստիկանությունը գործել է դատավարական օրենսդրության խախտմամբ:

41. 2003թ. օգոստոսի 25-ին ժելեզնոդորոժնիի շրջանային դատախազությունը կարճել է ենթադրյալ վատ վերաբերմունքի և ապօրինի ձերբակալման ու կալանքի փաստի առթիվ հարուցված վարույթը՝ այն հիմքով, որ ոստիկանության աշխատակիցները որևէ ապօրինի գործողություն չեն կատարել:

42. 2004թ. մարտի 3-ին Գլխավոր դատախազությունը վերացրել է 2003թ. օգոստոսի 25-ի կարճման որոշումը և վերսկսել վատ վերաբերմունքի և ապօրինի ձերբակալման վերաբերյալ քրեական գործով վարույթը: Ժելեզնոդորոժնի շրջանի դատախազությանը տրվել է 30 օր՝ ավարտելու համար գործի քննությունը՝ Գլխավոր դատախազի հսկողության ներքո: Տվյալ որոշման բովանդակությունը հետևյալն է.

«[Դիմողը] հետևողականորեն պնդել է, որ ինքն առարկել է առանց դատախազի սանկցիայի ոստիկանության կողմից իր բնակարան ապօրինի մուտք գործելու և ապօրինի խուզարկություն կատարելու դեմ, և այդ պատճառով [դիմողը] ենթարկվել է ապօրինի ձերբակալման, կալանքի և ծեծի...

Բժշկական փորձաքննությունը հայտնաբերել է մի շարք վնասվածքներ, որոնք առաջացել էին ծեծի արդյունքում, որի սկսվելու պահը և հասցված լիներու հանգամանքը հաստատում են [դիմողի] հայտարարությունները...Քննությամբ չեն պարզվել այն հանգամանքները, որոնցում հասցվել են այդ վնասվածքները:

Վարչական իրավախախտման, ինչպես նաև 1999թ. փետրվարի 13-ին դիմողին ձերբակալելու արձանագրությունները...պարունակում են ընթերականների վերաբերյալ կեղծ տեղեկություններ ... Այս հանգամանքները բազմակողմանի և լրիվ չեն հետազոտվել, թեպետ դրանք եղել են դիմողի վարչական կալանքի հիմքը: 2003թ. ապրիլի 29-ի որոշումը, որով մերժվել է [արձանագրությունները կազմած ոստիկանության աշխատակցի] դեմ քրեական գործի հարուցումը...եղել է անհիմն»:

43. 2004թ. ապրիլի 19-ի իր նամակում Կառավարությունը հայտարարել է, որ քննությունը դեռ շարունակվում է: Կողմերը չեն ներկայացրել որևէ նոր տեղեկություն քրեական գործի քննության հետագա ընթացքի վերաբերյալ:

B. Համապատասխան ներպետական օրենսդրությունը

1. Դիմադրություն ցույց տալը

Վարչական օրենսգրքի համապատասխան դրույթները (ՌԽՖՍՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք), որոնք գործել են մինչև 2002թ. հուլիսի 1-ը, ունեն հետևյալ բովանդակությունը.

Հոդված 165.

«Ոստիկանի կամ ժողովրդական դրուժնիկի օրինական կարգադրությանը կամ պահանջին հակադրելը ...առաջացնում է տուգանքի նշանակում՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկից մինչև տասնհինգապատիկի չափով ... կամ ուղղիչ աշխատանքների նշանակում՝ մեկից երկու ամիս ժամանակով...կամ, եթե այս միջոցները կհամարվեն անբավարար, վարչական կալանք՝ մինչև տասնհինգ օր ժամանակով»:

2. Վկաների հարցաքննությունը

Տվյալ ժամանակահատվածում գործող քրեական դատավարության օրենսգիրքը սահմանում էր.

Հոդված 155.

«Վկան հարցաքննության է կանչվում գրավոր ծանուցագրով, որը պետք է հանձնվի անձամբ իրեն, իսկ նրա բացակայության դեպքում՝ վերջինիս ընտանիքի չափահաս անդամին...

Ծանուցագրում նշվում է որպես վկա կանչվող անձի անունը, կանչվողը որտեղ, ում մոտ, որ օրը և որ ժամին պետք է ներկայանա, ինչպես նաեւ չներկայանալու հետեւանքները: Վկան կարող է կանչվել նաև հեռախոսով կամ հեռագրով»:

Հոդված 157.

«Վկայի հարցաքննությունը տեղի է ունենում քննության կատարման վայրում: Քննիչը կարող է որոշել հարցաքննել վկային վերջինիս գտնվելու վայրում»:

3. Վարչական ձերբակալումն ու կալանքը

1993թ. դեկտեմբերի 12-ի հանրաքվեով ընդունված Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը սահմանում է.

Հոդված 22.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք:

2. Ձերբակալելը, կալանավորելը և կալանավայր տեղավորելը թույլատրվում է միայն դատարանի որոշմամբ: Մինչև դատարանի որոշումն անձը չի կարող ձերբակալված մնալ ավելի, քան 48 ժամ»:

Վարչական օրենսգրքի 19-րդ հոդվածը (տե՛ս՝ վերը) սահմանում էր, որ ոստիկանությունը կարող է անձին ենթարկել վարչական ձերբակալման՝ վարչական իրավախախտումը կանխելու, անձի ինքնությունը պարզելու, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու նպատակով, եթե դա անհրաժեշտ է և չի կարող կատարվել տեղում, ինչպես նաև արդյունավետ քննություն իրականացնելու կամ վարչական տույժեր կիրառելու նպատակով: 242-րդ հոդվածը մասնավորապես սահմանում էր, որ անձի վարչական ձերբակալման ժամկետը չի կարող գերազանցել երեք ժամը՝ բացառությամբ որոշակի կատեգորիայի իրավախախտների, ներառյալ նրանց, ովքեր չեն ենթարկվել ոստիկանության օրինական կարգադրությանը: Այդպիսի անձինք կարող էին ձերբակալված մնալ այնքան, որքան անհրաժեշտ էր իրենց գործը շրջանային (քաղաքային) դատարանի դատավորի կամ ոստիկանության պետի կողմից լուծելու համար: 240-րդ հոդվածը սահմանում էր ձերբակալման արձանագրությանը ներկայացվող պահանջները:

Դատավորի նշանակած վարչական ձերբակալման բողոքարկում վարչական օրենսգրքով նախատեսված չէր: Համապատասխան դրույթներն ունին հետևյալ բովանդակությունը.

Հոդված 266.

«...Վարչական սանկցիա կիրառելու շրջանային (քաղաքային) դատարանի կամ դատավորի որոշումը վերջնական է և վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի վարույթի կարգով ենթակա չէ բողոքարկման ...»:

Հոդված 274.

» ..., 165, ...հողվածներով վարչական տույժ կիրառելու շրջանային (քաղաքային) դատավորի որոշումը կարող է բեկանվել կամ փոփոխվել նույն դատավորի կողմից՝ դատախազի հատուկ բողոքի հիման վրա կամ վերադաս դատարանի նախագահի կողմից՝ սեփական նախաձեռնությամբ»:

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԱՐՑԵՐԸ

1. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

44. Դիմողը պնդել է, որ թույլ է տրվել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ նշելով, որ ոստիկանությունն իր նկատմամբ դրսևորել է վատ վերաբերմունք իր ձերբակալման և ոստիկանության բաժանմունքում կալանքի տակ գտնվելու ընթացքում: Նա նաև պնդել է, որ վատ վերաբերմունքի առնչությամբ իր հայտարարություններն արդյունավետորեն չեն ուսումնասիրվել, ինչպես որ պահանջվում է նույն հոդվածով նախատեսված դատավարական պարտականությամբ: Կոնվենցիայի 3-րդ հոդվածը նախատեսում է.

«Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի»:

A. Ոստիկանության կողմից ենթադրյալ վատ վերաբերմունքը

1. Կողմերի դիրքորոշումները

45. Դիմողը հայտարարել է, որ 1999թ. փետրվարի 13-ին իրեն ձերբակալել են Կոնվենցիայի 3-րդ հոդվածին հակասող եղանակով: Ավելին, նա պնդել է, որ մինչև ոստիկանության բաժանմունք հասնելը ինքը ծեծի է ենթարկվել ոստիկանության այն աշխատակիցների կողմից, ովքեր իրեն հարցաքննել են: Հետագայում իրեն ոստիկանության աշխատակիցները կրկին ծեծի են ենթարկել նույն օրը, երբ ինքն արգելել է նրանց խուզարկելու իր բնակարանը: Դիմողը նշել է, որ ինքը ստացել է վնասվածքներ՝ կապտուկներ և վերքեր, և որ ինքը սարսափած է եղել այդպիսի վերաբերմունքի պատճառով: Դիմողը նաև պնդել է, որ դրանից հետո իրեն բժշկական օգնություն չի ցուցաբերվել:

46. Դիմողը ներկայացրել է անմիջապես իր ազատվելուց հետո կազմված դատաբժշկական փորձաքննության եզրակացություն, որով հաստատվում է դեպքերի

ընթացքի՝ իր ներկայացրած վարկածին համապատասխանող վնասվածքներ ստանալը:

47. Կառավարությունը 2004թ. մարտի 15-ի հաշվետվությունում և 2004թ. ապրիլի 19-ի գրությունում նշել է, որ վատ վերաբերմունքի առնչությամբ դիմողի հայտարարությունների հիման վրա կատարվող քննությունն ընթացքի մեջ է: Այն հայտնել է Դատարանին, որ Գլխավոր դատախազությունը վերանայել է ոստիկանության կողմից լիազորությունները չարաշահելու կապակցությամբ հարուցված թիվ 3467098 քրեական գործը և 2004թ. մարտի 3-ին վերսկսել է գործով վարույթը: Կառավարությունը հայտարարել է, որ մինչև այդ գործով վարույթի ավարտը չի կարող մեկնաբանություններ անել այս գանգատի էության վերաբերյալ:

48. Դրանից հետո Կառավարությունը որևէ հայտարարություն չի արել քննության ընթացքի կամ վերը հաստատված փաստերի առնչությամբ:

2. Դատարանի գնահատականը

49. Դատարանը հիշեցնում է, որ "երբ անձը կալանավորվելիս առողջ է եղել, սակայն ազատ արձակվելիս նա ունենում է վնասվածքներ, Պետությունը պարտավոր է համոզիչ բացատրություն տալ, թե ինչպես են առաջացել այդ վնասվածքները, իսկ դրա բացակայությունն առաջացնում է Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում" (տե՛ս *Tomasi v. France*, 1992թ. օգոստոսի 27-ի վճիռը, Շարք A, թիվ 241-A, էջ 40-41, 108-111 կետեր, և *Selmouni v. France* [Մեծ պալատ], թիվ 25803/94, կետ 87, ECHR 1999-V):

50. Ապացույցները գնահատելիս Դատարանը սովորաբար կիրառում է «ողջամիտ կասկածից վեր» ապացուցման չափորոշիչը (տե՛ս *Ireland v. the United Kingdom*, 1978թ. հունվարի 18-ի վճիռը, Շարք A, թիվ 25, էջ 64-65, կետ 161): Այդուհանդերձ, ապացուցողական այդպիսի զանգված կարող է ձևավորվել միայն ամբողջապես անհերքելի, ակնհայտ և համահունչ հետևությունների կամ փաստերի վերաբերյալ նմանատիպ չհերքված կանխավարկածների զուգակցության արդյունքում: Երբ դեպքը ամբողջությամբ կամ մեծ մասով տեղի է ունենում բացառապես իշխանությունների իմացությամբ, ինչպես կալանավորված անձանց նկատմամբ հսկողության պարագայում, ապա կալանքի ժամանակաընթացքում ստացված վնասվածքների կապակցությամբ առաջ են գալիս փաստի վերաբերյալ հաստատուն կանխավարկածներ: Անկասկած է, որ բավարար և համոզիչ բացատրության պարտականությունը կարող է դրվել իշխանությունների վրա (տե՛ս

Ribitsch v. Austria, 1995թ. դեկտեմբերի 4-ի վճիռը, Շարք A, թիվ 336, կետ 34, *Salman v. Turkey* վճիռը [Մեծ պալատ], թիվ 21986/93, կետ 100, ECHR 2000-VII):

51. Դատարանը նշում է, որ Կառավարությունը չի ստուգել իրադարձությունների վերաբերյալ դիմողի հայտարարությունները կամ դատաբժշկական փորձաքննության եզրակացությունը: 2003-2004թթ. կատարված քննությունը չի վերհանել դիմողի ներկայացրածներից տարբերվող որևէ նոր փաստ կամ ապացույց: Կառավարությունն էլ չի ներկայացրել որևէ բացատրություն առ այն, թե ինչպես կարող էին առաջանալ դիմողի վնասվածքները: Մասնավորապես, որպես ընդհանուր հիմնավորում կարող է գնահատվել այն, որ այդ վնասվածքները գոյություն չեն ունեցել մինչև դիմողի կալանավորումը:

52. Ավելին, իշխանությունները խոստովանել են, որ դիմողի հայտարարությունները ճշմարտացի են: Գլխավոր դատախազությունն ընդունել է, որ դիմողը հետևողականորեն և լիովին հաստատել է վատ վերաբերմունքի առնչությամբ իր պնդումները և ընդգծել, որ բժիշկ փորձագետի կողմից արձանագրված՝ դիմողի վնասվածքները համապատասխանում են դեպքերի առնչությամբ դիմողի տված գնահատականներին (տե՛ս վերը՝ կետ 42):

53. Դատարանը նշում է, որ ոստիկանությունն ակնկալել է, որ դիմողը կարող է տեղեկություններ տրամադրել սպանության կապակցությամբ, որի համար կասկածվում էր L.-ն՝ ենթադրաբար դիմողի ընկերը: Դատարանն ուշադրություն է դարձնում այն փաստին, որ պաշտոնական հայտարարությունների միջև առկա է հակասություն այն հարցում, թե որն է դիմողին ոստիկանության բաժանմունք տանելու պատճառը, և հանգում է հետևության, որ նրան այնտեղ են տարել որպես վկա հարցաքննելու նպատակով, այլ ոչ թե աննշան վարչական իրավախախտման կապակցությամբ: Այս հարցաքննությունը չի կատարվել ռուսաստանյան օրենսդրության սովորական դատավարական երաշխիքների պահպանմամբ, ինչպիսին է հարցաքննության արձանագրման պարտադիրությունը, փաստաբանի մասնակցությունը և այլն, ուստի Դատարանը չի բացառում, որ ոստիկանության կողմից կարող է կիրառված լինի հարկադրանք՝ դիմողից տեղեկություններ ստանալու նպատակով:

54. Հաշվի առնելով բժշկական եզրակացությանը համապատասխանող դիմողի հետևողական և մանրամասն հայտարարությունները և նկատի ունենալով կալանքից ազատվելիս դիմողի ունեցած վնասվածքների առաջացման առնչությամբ այլ համոզիչ բացատրության բացակայությունը՝ Դատարանն ընդունում է, որ դիմողի նկատմամբ եղել է վատ վերաբերմունք:

55. Ինչ վերաբերում է վատ վերաբերմունքի հետ կապված գործողությունների լրջությանը, ապա Դատարանը հիշեցնում է, որ վատ վերաբերմունքը որպես խոշտանգում որակելու համար պետք է հաշվի առնել 3-րդ հոդվածով սահմանված տարբերությունն այդ երևույթի և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի միջև: Ակնհայտ է, որ Կոնվենցիան նպատակ է հետապնդում այս տարբերության միջոցով հատուկ ընդգծելու անմարդկային այն վերաբերմունքը, որի արդյունքում պատճառվում է խիստ լուրջ և դժան տառապանք: Նախքան այս գործը, Դատարանը քննել է գործեր, որոնցով գտել է, որ տեղի է ունեցել վերաբերմունք, որը կարող է որակվել միայն որպես խոշտանգում (տե՛ս *Aksoy v. Turkey*, 1996թ. դեկտեմբերի 18-ի վճիռը, *Վճիռների և որոշումների 1996-VI ժողովածու*, էջ 2279, կետ 64, *Aydin v. Turkey*, 1997թ. սեպտեմբերի 25-ի վճիռը, 1997-VI ժողովածու, էջ 1891-92, 83-84 և 86 կետեր, վերը նշված՝ *Selmouni-ի* գործով վճիռը, կետ 105, *Dikme v. Turkey* գործով վճիռը, թիվ 20869/92, 94-96 կետեր, ECHR 2000-VIII, իսկ վերջին գործերի շարքում՝ *Batı and Others v. Turkey* վճիռը, թիվ 33097/96 և 57834/00, կետ 116, ECHR 2004-(հատվածներ)):

56. Վիճարկվող գործողությունները հետապնդել են դիմողի մոտ վախի զգացում, տառապանք և նվաստացում առաջացնելու նպատակ, որոնց արդյունքում նա իրեն ստորացված է զգացել, և որը, հավանաբար, խարխուլել է նրա ֆիզիկական և հոգեկան վիճակը: Ամեն դեպքում, Դատարանը հիշեցնում է, որ ազատությունից զրկված անձանց նկատմամբ ֆիզիկական ներգործությունը, որի անհրաժեշտությունն անմիջականորեն չի առաջացել հենց իրենց՝ անազատության մեջ պահվող անձանց վարքագծի պատճառով, նվաստացնում է մարդու արժանապատվությունը և սկզբունքորեն հակասում է 3-րդ հոդվածին (տե՛ս վերը նշված *Selmouni-ի* վճիռը, կետ 99):

57. Դատարանը գտնում է, որ տվյալ գործում ֆիզիկական ցավի կամ տանջանքի առկայությունը հաստատվում են բժիշկ փորձագետի կողմից և կալանքի տակ գտնվելիս վատ վերաբերմունքի ենթարկվելու վերաբերյալ դիմողի հայտարարություններով: Դեպքերի ընթացքը նույնպես ցույց է տալիս, որ ցավ և տանջանք նրան պատճառվել է դիտավորյալ, մասնավորապես՝ Լ.-ին առնչվող տեղեկություն ստանալու նպատակով (տե՛ս վերը՝ 53-54 կետեր):

58. "Ցավի կամ տանջանքի" լրջության աստիճանը գնահատելու համար Դատարանը հաշվի է առնում գործի բոլոր հանգամանքները՝ այդ վերաբերմունքի տևողությունը, դրա ֆիզիկական կամ հոգեբանական ազդեցությունը և, ինչպես որոշ գործերում է, տուժողի սեռը, տարիքը և առողջական վիճակը (տե՛ս վերը նշված *Batı-ի* վճիռը, կետ 120): Դատարանը նկատում է, որ քննարկվող ժամանակահատվածում

դիմողն ընդամենը տասնինը տարեկան իգական սեռի ներկայացուցիչ է եղել, ով հակադրվել է մի քանի արական սեռի ոստիկանների, դիմողը, փաստորեն, անպաշտպան է եղել: Ավելին, վատ վերաբերմունքը տևել է մի քանի ժամ, որի ընթացքում նրան երկու անգամ ենթարկել են ծեծի և դաժան ֆիզիկական ու հոգեբանական ազդեցության այլ ձևերի:

59. Այս հանգամանքներում Դատարանը հանգում է այն եզրակացության, որ ամբողջության մեջ դիտարկելով և հաշվի առնելով նպատակն ու դաժանությունը՝ քննարկվող վատ վերաբերմունքը դրսևորվել է խոշտանգման ձևով՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածի իմաստով:

60. Դատարանը եզրակացնում է, որ այս առումով տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում:

B. Արդյունավետ քննության ենթադրյալ չիրականացումը

1. Կողմերի դիրքորոշումները

61. Դիմողը հայտարարել է, որ դեպքերից անմիջապես հետո ինքը մի շարք հայտարարություններ է ներկայացրել՝ խնդրելով ոստիկանության համապատասխան աշխատակիցների նկատմամբ հարուցել քրեական գործ, նա նշել է նրանց անուններն ու պաշտոնները և հայտարարել, որ կարող է ճանաչել նրանց, ներկայացրել է իր վնասվածքների առնչությամբ բժշկական եզրակացությունը: Այդուհանդերձ, իր հայտարարություններից ոչ մեկը նպատակին չի հասել, և որևէ քննություն չի ձեռնարկվել՝ մինչև Դատարանին ներկայացված իր գանգատը չի տրամադրվել պատասխանող Կառավարությանը: Ինչ վերաբերում է 2003թ. մեկնարկած վարույթին, ապա դիմողն այն ժամանակին կամ արդյունավետ չի համարել: Ավելին, նա մտավախություն է ունեցել, որ իշխանությունները բացասական վերաբերմունք կցուցաբերեն այն փաստի նկատմամբ, որ ինքը գանգատ է ներկայացրել Եվրոպական դատարանին, և գտել է, որ իր հանդեպ նրանց վերաբերմունքը եղել է սարսափեցնող: Այդ պատճառով նա այս քննությանը չի ցուցաբերել ակտիվ մասնակցություն: Նա հայտարարել է, որ չնայած ապացույցներ է ներկայացրել քննիչին, իրեն երբևէ չեն տեղեկացրել քննության արդյունքի մասին:

62. Կառավարությունը որևէ կերպ չի մեկնաբանել այս բողոքը (տե՛ս վերը՝ 47-48 կետեր):

2. Դատարանի գնահատականը

63. Դատարանը նախևառաջ գտնում է, որ բժշկական եզրակացությունը և դիմողի բողոքներն ու ցուցմունքները միասին առաջացրել են լուրջ կասկած, որ նրա վնասվածքները կարող էին հասցված լինել ոստիկանության կողմից:

64. Երբ անձը ներկայացնում է հիմնավորված բողոք առ այն, որ ինքը ոստիկանության կողմից ենթարկվել է 3-րդ հոդվածով արգելված լուրջ վատ վերաբերմունքի, ապա այդ դրույթը, Կոնվենցիայի 1-ին հոդվածով Պետության վրա դրված այն ընդհանուր պարտավորության հետ զուգորդված, որի ուժով Պետությունը պարտավոր է "իր իրավասության ներքո գնվող յուրաքանչյուրի համար ապահովել այն իրավունքներն ու ազատությունները, որոնք սահմանված են Կոնվենցիայում...", անուղղակիորեն պահանջում է, որպեսզի տեղի ունենա արդյունավետ պաշտոնական քննություն: Այդ քննությունը պետք է կարողանա հանգեցնել պատասխանատու անձանց բացահայտմանն ու պատասխանատվությանը (տե՛ս *Assenov and Others*, 1998թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, 1998-VIII *ժողովածու*, էջ 3290, կետ 102, և *Labita v. Italy* [Մեծ պալատ], թիվ 26772/95, կետ 131, ECHR 2000-IV): Դատարանի նախադեպային իրավունքում բնորոշված արդյունավետության նվազագույն չափանիշները նույնպես ներառում են պահանջներ, համաձայն որոնց՝ քննությունը պետք է լինի անկախ, անկողմնակալ և հրապարակային, և որ իրավասու մարմինները պետք է գործեն օրինակելի ջանասիրությամբ և բարեխղճությամբ (տե՛ս, օրինակ, *Isayeva and Others v. Russia* վճիռը, թիվ 57947/00, 57948/00 և 57949/00, 208-213 կետեր, 2005թ. փետրվարի 24):

65. Դատարանը գտնում է, որ վատ վերաբերմունքի կապակցությամբ դիմողի հայտարարությունը քննելու դատավարական պարտականությունն առաջացել է այն ժամանակ, երբ նա գործը ներկայացրել է իրավասու մարմիններին, այսինքն՝ դատախազությանը և ոստիկանության պետին: Քննություն իրականացնելու մասին նրա միջնորդությունները ներկայացվել են դեպքից հետո մեկ ամսվա ընթացքում և պարունակել են դեպքերի մանրամասն նկարագրություն, բացահայտորեն մատնացույց են արել կոնկրետ անձանց և ուղեկցվել են բժշկական եզրակացությամբ, ինչը հաստատել է նրա պատմածը: Այդուհանդերձ, որևէ քննություն չի իրականացվել: Ներքին գործերի նախարարությունում իրականացված քննությունը (տե՛ս վերը՝ կետ 25) թեև հանգեցրել է կարգապահական պատասխանատվությունների, այնուհանդերձ, չի բացահայտել պատասխանատվության ենթարկված անձանց անունները կամ նրանց պատժելու հիմքերը: Միայն այս հիմնավորմամբ այն չի կարող համարվել արդյունավետ քննություն, և Կառավարությունն իրոք չի նպաստել դրա պատշաճ կատարմանը:

66. Քննությունը սկսվել է վիճարկվող իրադարձություններից միայն չորս տարի անց, երբ գործի վրա է հրավիրվել ազգային իշխանությունների ուշադրությունը՝ կապված Դատարանում դիմողի գործի քննության հետ: Կատարվել է քրեական գործով քննություն, որը, չնայած ուշացմանը, անխուսափելիորեն դատապարտված չէր տապալման, քանի որ գործի նյութերն արդեն իսկ պարունակում էին դիմողի կողմից ներկայացված բավարար գրավոր ապացույցներ: Այդուհանդերձ, այդ քննությունը բավարար չէր, քանի որ այն ձախողվել էր գործի հանգամանքները պարզելու հարցում և չէր տվել իր առջև դրված այնպիսի հարցի պատասխանը, ինչպիսին է դիմողի վնասվածքների առաջացումը (տե՛ս վերը՝ կետ 42):

67. 2004թ. մարտի 3-ին Գլխավոր դատախազը ցուցում է տվել գործով վարույթը վերսկսելու մասին, բայց դրա հետ կապված որևէ հաղորդում չի ստացվել: Ուստի Դատարանին մնում է եզրահանգել, որ վերջին երեք տարիների ընթացքում իշխանությունները ոչինչ չեն ձեռնարկել այն բացթողումները շտկելու համար, որոնց նրանք լավատեղյակ են:

68. Հետևաբար՝ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ վատ վերաբերմունքի առնչությամբ դիմողի հայտարարությունների առթիվ արդյունավետ քննության բացակայության պատճառով:

II. ՎԱՏ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

69. Դիմողը նաև բողոքել է, որ իրեն չեն տրամադրել պաշտպանության արդյունավետ միջոց՝ կապված վատ վերաբերմունքի առնչությամբ իր բողոքի հետ: Նա հայտարարել է, որ քրեական գործի քննության հասնելու իր նախաձեռնած բոլոր փորձերը ձախողվել են, և նույն ճակատագրին են արժանացել դատարաններում քաղաքացիական դատավարության կարգով հատուցում ստանալու իր փորձերը: Նա վկայակոչել է 13-րդ հոդվածը, համաձայն որի.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

70. Կառավարությունը չի ներկայացրել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի առնչությամբ ներկայացված դիրքորոշումից տարբերվող այլ դիրքորոշում:

71. Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածը պահանջում է, որպեսզի այն դեպքում, երբ տեղի է ունեցել Կոնվենցիայով պահպանվող մեկ կամ մի քանի իրավունքների ենթադրյալ խախտում, տուժողին հասու լինի պետական ծառայողներին կամ պետական մարմիններին այդ խախտման համար պատասխանատվության ենթարկելու մեխանիզմ: Պայմանավորվող պետությունները որոշակիորեն ազատ են որոշելու այն եղանակը, որով նրանք կկատարեն այս դրույթի ներքո Կոնվենցիայով իրենց վրա դրված պարտականությունները: Որպես ընդհանուր կանոն, եթե առանձին միջոցն ինքնին լիովին չի բավարարում 13-րդ հոդվածի պահանջները, ներպետական օրենսդրությամբ նախատեսված միջոցների ամբողջությունը կարող է այդպեսին լինել (այլոց շարքում տե՛ս *Kudla v. Poland* վճիռը [Մեծ պալատ], թիվ 30210/96, կետ 157, ECHR 2000-XI; տե՛ս նաև՝ *Čonka v. Belgium* վճիռը, թիվ 51564/99, կետ 75, ECHR 2002-I):

72. Այդուհանդերձ, 13-րդ հոդվածի ներքո Պետության ունեցած պարտավորության ծավալը տարբեր է՝ կախված բողոքի բնույթից, և կոնկրետ դեպքերում Կոնվենցիան պահանջում է նախատեսել առանձնահատուկ միջոցներ: Այսպես, կասկածելի մահվան կամ վատ վերաբերմունքի դեպքերում, ճանաչելով 2-րդ և 3-րդ հոդվածներով պաշտպանվող իրավունքների հիմնարար կարևորությունը, 13-րդ հոդվածը, փոխհատուցում վճարելու հետ մեկտեղ, պահանջում է անհրաժեշտության դեպքում կատարել սպառիչ և արդյունավետ քննություն, որը կարող է հանգեցնել մեղավոր անձանց բացահայտմանն ու պատասխանատվությանը (տե՛ս *Anguelova v. Bulgaria* վճիռը, թիվ 38361/97, 161-162 կետեր, ECHR 2002-IV, *Assenov and Others v. Bulgaria*՝ վերը նշված վճիռը, կետ 114, *S̸heyla Aydın v. Turkey* վճիռը, թիվ 25660/94, կետ 208, 2005թ. մայիսի 24):

73. Տվյալ գործով ներկայացված ապացույցների հիման վրա Դատարանը գտավ, որ պետական իշխանությունները պատասխանատվություն են կրում 1999թ. փետրվարի 13-ին դիմողի ստացած վնասվածքների համար: Այս կապակցությամբ ազգային իշխանություններին դիմողի ներկայացրած բողոքները հիմնված են եղել միևնույն ապացույցների վրա և այդ պատճառով կարող են «փաստարկված» ճանաչվել՝ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի իմաստով (տե՛ս *Boyle and Rice v. the United Kingdom*, 1988թ. ապրիլի 27-ի վճիռը, Շարք A, թիվ 131, էջ 23, կետ 52): Այսպիսով, իշխանությունները պարտավոր էին ուստիկանության աշխատակիցների դեմ դիմողի հայտարարությունների հիման վրա կատարել արդյունավետ քննություն: Վերը նշված պատճառների ուժով չի կարելի ընդունել, որ կատարվել է քրեական գործի արդյունավետ քննություն: Համապատասխանաբար, դիմողին հասու ցանկացած այլ միջոց, ներառյալ՝ վնասների փոխհատուցման հայցը, ունեցել է հաջող ավարտի

սահմանափակ ներուժ: Չնայած քաղաքացիական դատարանները հնարավորություն ունեն փաստերին տալ ինքնուրույն և անկախ գնահատական, գործնականում քրեական գործով նախնական քննությունն այնքան ծանրակշիռ դեր ունի, որ քաղաքացիական գործով հայցվորի կողմից ներկայացված նույնիսկ ամենահամոզիչ ապացույցը հաճախ կարող է ճանաչվել «անհամապատասխան»: Դիմողի գործով ընթացած քաղաքացիական դատավարությունը վերը նշվածի ապացույցն է: Դատարանը պարզապես հաստատել է դատախազի կարծիքն այն մասին, որ դիմողի բողոքն անհիմն է՝ առանց գործի փաստական հանգամանքներին գնահատական տալու (տե՛ս վերը՝ 29-30 կետեր): Այդ պատճառով վնասների հատուցման հայցային պահանջը, ըստ գործի հանգամանքների, եղել է ընդամենը տեսական և պատրանքային միջոց, ինչը չէր կարող ապահովել դիմողին հատուցման տրամադրում:

74. Ուստի Դատարանը գտնում է, որ ոստիկանության վատ վերաբերմունքի առնչությամբ դիմողին չի տրամադրվել պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց: Հետևաբար՝ այս առումով տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում:

III. ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱԼԱՔԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 5-ՐԴ և 6-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

75. Դիմողը գանգատվել է, որ 1999թ. փետրվարի 13-ի իր ձերբակալումը, ոստիկանության բաժանմունքում ամբողջ գիշեր տևած արգելանքը և հետագա հնգօրյա կալանքը եղել են անօրինական: Այս գանգատներն ընդունելի են հայտարարվել Կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների ներքո:

Հոդված 5.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(a) անձին օրինական կերպով կալանքի տակ պահելն իրավասու դատարանի կողմից նրա դատապարտվելուց հետո,

(b) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությամբ չենթարկվելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտավորության կատարումն ապահովվելու նպատակով,

(c) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

(d) անչափահասին կալանքի վերցնելն օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմինն ներկայացնելու նպատակով,

(e) անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլներին կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

(f) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարվում՝ նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

...

4. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է»:

Չոդված 6.

«Յուրաքանչյուր ոք...իրեն ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ ունի... դատարանի կողմից...արդար դատաքննության իրավունք»:

76. Կառավարությունն ընդունել է, որ դիմողի ձերբակալումը և կալանավորումը եղել են անօրինական: Այդուհանդերձ, այն հայտարարել է, որ դիմողը դադարել է այս կետում քննարկվող խախտումների զոհ լինելուց: Կառավարությունը հղում է կատարել Ռոստովի մարզային դատարանի նախագահի 2003թ. մարտի 5-ի որոշմանը, որը հաստատել է, որ դիմողի ձերբակալումը կատարվել է ներպետական օրենսդրության խախտմամբ, և որով 1999թ. փետրվարի 14-ի որոշումը վերացվել է:

77. Կառավարության կարծիքով՝ նշված որոշմամբ դիմողին հնարավորություն է ընձեռվել առանձին քաղաքացիական վարույթի կարգով պահանջելու հատուցում ազատությունից ապօրինի զրկվելու հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի

համար, ինչպես որ նախատեսված է Քաղաքացիական օրենսգրքի 1070-րդ և 1100-րդ հոդվածներում: Կառավարությունը գտնում է, որ քանի որ դիմողը վնասների հատուցման համար նման գործողությունների չի դիմել, նա չի սպառել ներպետական միջոցները և, համապատասխանաբար, Դատարանը պետք է մերժի դիմողին ազատությունից զրկելու հետ կապված գանգատները:

78. Դիմողն առարկել է Կառավարության դիրքորոշման դեմ և պնդել իր գանգատները:

79. Առարկելով՝ Կառավարությունը միջնորդել է Դատարանին հաստատել, որ 2003թ. մարտի 5-ի որոշումն անդրադարձել է դիմողի՝ որպես տուժողի կարգավիճակի վրա, և որ դիմողը պետք է դիմի հատուցում ստանալու համար: Այդուհանդերձ, Դատարանը գտնում է, որ պատասխանող Կառավարության կողմից ներկայացվել է ըստ էության նույն առարկությունը, որը Դատարանը մերժել է գանգատն ընդունելու իր որոշման մեջ: Համապատասխանաբար, Դատարանը չի քննի Կառավարության առարկությունը:

A. Կալանքի օրինականությունը

80. Դատարանը վերը նշվածից եզրակացնում է, իսկ կողմերն էլ չեն վիճարկում, որ դիմողի ձերբակալումը, ոստիկանության բաժանմունքում ամբողջ գիշեր տևած նրա արգելանքը և դրան հաջորդած հնգօրյա վարչական կալանքը հավասարազոր են ազատությունից զրկելուն՝ Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի իմաստով:

81. Նախ, պետք է պարզել, թե արդյոք արգելանքը համապատասխանում է 5-րդ հոդվածի 1-ին կետում սպառնիչ թվարկված ազատությունից զրկելու թույլատրելի հիմքերից որևէ մեկին, թե՛ ոչ: Դատարանը նկատում է, որ դիմողին անազատության մեջ պահելը կատարվել է երկու տարբեր ժամանակահատվածներում, այսինքն՝ դատավորի առջև 1999թ. փետրվարի 14-ին ներկայացվելուց առաջ և հետո: Այդ օրը որոշում է կայացվել դիմողին հնգօրյա կալանքի վերցնելու մասին՝ կապված նրա կողմից ենթադրաբար տեղի է ունեցել վարչական իրավախախտման հետ: Համապատասխանաբար, այդ տեսանկյունից նրա կալանավորումը լիովին համապատասխանում է նշված հիմքերից մեկին: Ինչ վերաբերում է ողջ գիշեր տևած արգելանքին, ապա այն ընդհանուր առմամբ անբացատրելի է մնում: Դատարանը այդ ժամանակահատվածը կհետազոտի առանձին:

1. Ձերբակալումը և գիշերային արգելանքը

82. Դատարանը նշում է, որ դիմողին ազատությունից զրկելու մի փուլում նա մեղադրվել է վարչական իրավախախտում կատարելու մեջ և տեսականորեն կարող էր համարվել կալանավորված՝ Վարչական օրենսգրքի 242-րդ հոդվածի համաձայն, մինչև որ վարչական գործը կքննվեր դատարանի կողմից: Այնուամենայնիվ, պարզվում է, որ նրան ոստիկանության բաժանմունք բերելու իրական պատճառը եղել է նրանից L-ի գործով տեղեկություն ստանալը և հարկադրելը՝ տալու իր բնակարանի բանալիները: Վարչական իրավախախտման մեջ դիմողին մեղադրելն ընդամենն առիթ է եղել վերջինիս հարցաքննելու համար:

83. Այս հանգամանքներում Դատարանը կարող է ձեռնպահ մնալ որոշելուց, թե արդյոք ամբողջ գիշեր տևած դիմողի արգելանքը ամբողջովին ներառվել է 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո, թե՛ ոչ, քանի որ ամեն դեպքում կկիրառվեն ստորև ներկայացվող գնահատականները:

84. Նախ, Դատարանը նկատում է, որ դիմողի նախնական ձերբակալման և ոստիկանության բաժանմունքում ամբողջ գիշեր պահելու առնչությամբ որևէ փաստաթուղթ չի հայտնաբերվել (տե՛ս վերը՝ կետ 27): Դրանից հետևում է, որ դիմողի ձերբակալումից մոտ քսան ժամ անց գոյություն չի ունեցել որևէ գրառում այն մասին, թե ով է դիմողը, ինչն է եղել նրան անազատության մեջ պահելու հիմքը, որքան է դրա նախատեսված տևողությունը: Եթե նույնիսկ ընդունենք, որ ոստիկանությունը մտադիր էր կազմելու վարչական իրավախախտման համար մեղադրանք, ապա դա չի ազատում նրանց այդպիսի կարևոր ձևականությունները կատարելու պարտականությունից՝ մինչև դիմողին արգելանքի վերցնելը: Այդ փաստն ինքնին պետք է դիտարկվի որպես շատ լուրջ բացթողում, քանի որ Դատարանի ձևավորված ավանդական մոտեցման համաձայն՝ անձի գաղտնի կալանավորումը լիովին հակասում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի՝ հիմնարար կարևորության երաշխիքներին և կոպտորեն խախտում է այդ դրույթը: Այնպիսի հարցերի առնչությամբ գրառումների բացակայությունը, ինչպիսիք են կալանավորման ամսաթիվը, կալանքի տևողությունը և վայրը, կալանավորվածի անունը, կալանավորելու հիմքերը և այն կատարող անձի անունը, պետք է դիտվի որպես օրինականության պահանջը և Կոնվենցիայի 5-րդ հոդվածի նպատակը խախտող հանգամանք (տե՛ս վերը հիշատակված *Anguelova v. Bulgaria*-ի վճիռը, կետ 154, և *Kurt v. Turkey* 1998թ. մայիսի 25-ի վճիռը, Վճիռների և որոշումների ժողովածու, 1998-III, կետ 125):

85. Ավելին, գանգատն ընդունելի հայտարարելուց հետո Կառավարության պնդումներից կարելի է եզրահանգել, որ ըստ ներպետական օրենսդրության՝ դիմողի ձերբակալումը եղել է անօրինական (տե՛ս վերը՝ 39-40 կետեր):

86. Այս համատեքստում Դատարանը հանգում է այն հետևության, որ մինչև 1999թ. փետրվարի 14-ը դատավորի առջև դիմողի ներկայանալը՝ անազատության մեջ պահվելու ամբողջ տևողությունը չի համապատասխանում Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի երաշխիքներին: Հետևաբար՝ տեղի է ունեցել այս հոդվածի խախտում:

2. Հնգօրյա կալանքը՝ ոստիկանությանը դիմադրություն ցույց տալու մեղադրանքի հիման վրա

87. 1999թ. փետրվարի 14-ին դիմողը բերվել է դատավորի մոտ, ով գտել է, որ դիմողը դիմադրություն է ցույց տվել ոստիկանությանը, կատարել է Վարչական օրենսգրքի 165-րդ հոդվածով նախատեսված իրավախախտում, և որոշում է կայացրել դիմողին հինգ օրով կալանավորելու մասին: 2003թ. մարտի 5-ին այս որոշումը ճանաչվել է անօրինական և վերացվել է: Անհրաժեշտ է պարզել, թե արդյոք վարչական դատավարության արդյունքում նշանակված այս տույժը համապատասխանել է 5-րդ հոդվածին՝ առանց դատողություններ անելու վարչական գործով միևնույն որոշման կապակցությամբ 6-րդ հոդվածի ներքո բերված գանգատի էության վերաբերյալ:

88. Դատարանը հիշեցնում է *Benham v. the United Kingdom* վճռում սահմանված (1996թ. հունիսի 10-ի վճիռը, ժողովածու, 1996-III, 40-42 կետեր) և այլ գործերում հիշատակված հետևյալ ընդհանուր սկզբունքները (տե՛ս *Lloyd and Others v. the United Kingdom*, 2005թ. մարտի 1-ի վճիռը, թիվ 29798/96, և *Perks and Others v. the United Kingdom*, 1999թ. հոկտեմբերի 12-ի վճիռը, թիվ 25277/94):

40. Տվյալ գործով որոշման ենթակա հիմնական հարցն այն է, թե արդյոք վիճարկվող կալանքը եղել է «օրինական»՝ ներառյալ այն հարցը, թե արդյոք այն համապատասխանել է «օրենքով նախատեսված ընթացակարգին», թե՛ ոչ: Այստեղ Կոնվենցիան ըստ էության հղում է կատարում ներպետական օրենսդրությանը և սահմանում է դրանով սահմանված նյութական և դատավարական կանոններին հետևելու պարտականությունը, սակայն այն պահանջում է նաև, որ ազատության ցանկացած սահմանափակում համապատասխանի 5-րդ հոդվածի կարգադրագրին, այն է՝ անձին պաշտպանի կամայականությունից...

41. Ներպետական իշխանությունների, հատկապես դատարանների, համար առաջնային են ներպետական օրենսդրության մեկնաբանումն ու կիրառումը: Այդուհանդերձ, քանի որ 5-րդ հոդվածի 1-ին կետի ներքո՝ ներպետական օրենսդրությանը չհամապատասխանելը հանգեցնում է Կոնվենցիայի խախտմանը, հետևաբար, Դատարանը կարող է և պետք է օժտված լինի որոշակի իշխանությամբ ստուգելու օրենքի համապատասխանությունը:

42. Կալանքի տևողությունը սկզբունքորեն օրինական կլինի, եթե այն հիմնված լինի դատարանի որոշման վրա: Այն հետևությունը, որ որոշում կայացնելիս դատարանը թույլ է տվել ներպետական օրենսդրության խախտում, անհրաժեշտաբար հետադարձ ուժով չի ազդում կալանքի միջանկյալ տևողության օրինականության վրա: Այս հիմնավորմամբ Ստրասբուրգի մարմինները մշտապես մերժել են ընդունել գանգատներ այն անձանցից, որոնք դատապարտված լինելով քրեական հանցագործությունների համար՝ գանգատում մատնանշում են, որ իրենց դատապարտումը կամ պատիժը վերադաս դատարանների կողմից ճանաչվել են փաստական կամ իրավական սխալի արդյունք:

89. Դատարանը նկատում է, որ հնգօրյա կալանքն ի կատար է ածվել դատավորի որոշման հիման վրա, ով սկզբունքորեն իրավասու է եղել ընդունելու տվյալ որոշումը: Այս որոշման բովանդակային ճշտությունը, որպես կանոն, դուրս է մնում Դատարանում ստուգման շրջանակից, ինչպես բխում է վերը մեջբերված դատական նախադեպից: Այդուհանդերձ, այս գործը տարբերվում է այն գործերից, որոնցում վիճարկվող որոշումները դատական իշխանությունների կողմից ընդունվել են բարեխղճորեն՝ օրենքով նախատեսված ընթացակարգի հիման վրա: Ի տարբերություն դրանց, տվյալ գործում դատավորն իր իշխանությունն օգտագործել է Կոնվենցիայով նախատեսված երաշխիքներին ակնհայտորեն հակառակ: Ուստի, դրա հիման վրա սահմանված կալանքն անհամատեղելի է Կոնվենցիայի 5-րդ հոդվածով երաշխավորված՝ կամայականությունից պաշտպանելու ընդհանուր երաշխիքին:

90. Դրանից հետևում է, որ դիմողի հնգօրյա կալանքի կապակցությամբ թույլ է տրվել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

B. Արդար դատաքննության իրավունք

1. 6-րդ հոդվածի 1-ին կետի կիրառելիությունը

91. Թեև վարչական դատավարության նկատմամբ 6-րդ հոդվածի կիրառելիությունը չի վիճարկվում, Դատարանը սեփական նախաձեռնությամբ անհրաժեշտ է համարում անդրադառնալ այդ հարցին: Ստորև ներկայացված հիմնավորումներով Դատարանը գտնում է, որ այս դատաքննությունը ներառում է «դիմողի դեմ քրեական մեղադրանք»:

92. Դատարանը գտնում է, որ այն հարցը որոշելիս, թե արդյոք իրավախախտումը որակվում է որպես Կոնվենցիայի իմաստով «քրեական», թե՛ ոչ, նախևառաջ անհրաժեշտ է պարզել, թե պատասխանող Պետության իրավական համակարգում տվյալ իրավախախտումը նախատեսող դրույթը արդյոք պատկանում է

քրեակա՞ն օրենսդրությանը, թե՛ ոչ. երկրորդ, պետք է հաշվի առնել «իրավախախտման բնույթը» և նախատեսված պատժի խստությունը (տե՛ս *Ozturk v. Germany*, 1984թ. փետրվարի 21-ի վճիռը, Շարք A, թիվ 73, էջ 18, կետ 50 և *Demicoli v. Malta*, 1991թ. օգոստոսի 27-ի վճիռը, մաս A, թիվ 210, էջ 15-17, կետ 31-34):

93. Ինչ վերաբերում է ներպետական որակմանը, Դատարանը նախկինում հետազոտել է կոնկրետ իրավական համակարգերում որպես վարչական բնորոշվող բնագավառը և գտել, որ այն ընդգրկում է որոշ իրավախախտումներ, որոնք իրենց բնույթով քրեական են, սակայն չափազանց պարզունակ են քրեական իրավունքով և դատավարությամբ կարգավորվելու համար (տե՛ս *Palaoro v. Austria*, 1995թ. հոկտեմբերի 23-ի վճիռը, Շարք A, թիվ 329-B, էջ 38, 33-35 կետեր): Ռուսաստանյան համակարգում նույնպես դա առկա է:

94. Դատարանը նաև նկատում է, որ ազատությունից զրկելը, որը կիրառվել է որպես իրավախախտման համար պատիժ, սովորաբար պատկանում է քրեական բնագավառին, եթե այն իր բնույթով, տևողությամբ կամ կատարման եղանակով ակնհայտորեն վնասակար չէ (տե՛ս *Engel and Others v. the Netherlands*, 1976թ. հունիսի 8-ի վճիռը, Շարք A, թիվ 22, կետ 82-83 և *Ezeh and Connors v. the United Kingdom* [Մեծ պալատ], թիվ 39665/98 և 40086/98, 69-130 կետեր, ECHR 2003-X): Տվյալ գործում դիմողը հինգ օրով զրկվել է ազատությունից և այդ ողջ ժամանակաընթացքում գտնվել կալանավայրում: Վերջապես, դիմողի նկատմամբ կիրառված սանկցիայի նպատակը եղել է լիովին պատժիչ:

95. Այս դիտարկումները բավարար են որոշելու, որ իրավախախտումը, որի կատարման մեջ դիմողը մեղադրվել է, կարող է որակվել որպես Կոնվենցիայի իմաստով «քրեական»: Հետևաբար՝ 6-րդ հոդվածը կիրառելի է:

2. Արդյոք դիմողի նկատմամբ դատաքննությունը արդար է եղել

96. Կառավարությունն ընդունել է, որ խնդրո առարկա վարույթը թերի է եղել ինչպես ներպետական իրավունքի, այնպես էլ Կոնվենցիայի տեսանկյունից: Իսկապես, վերը նշված որոշումը բեկանող դատական ակտում նշվել է, որ «դիմողին դատապարտած դատավորը չի հետազոտել գործի հանգամանքները և չի հաստատել, թե արդյոք դիմողը մեղավոր է եղել վարչական իրավախախտման համար, թե՛ ոչ»: Դա հաստատում են դիմողի հայտարարություններն այն մասին, որ դատավարությունը մրցակցային չի եղել, և որ նույնիսկ դատավարության արտաքին կողմն այն աստիճան է անտեսվել, որ ինքը նույնիսկ հնարավորություն չի ունեցել պարզելու դատավոր Պ.-ի մոտ կարճ ժամանակով իրեն բերելու պատճառը:

97. Հետևաբար՝ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում:

IV. ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԴԱՏԱՊԱՐՏՎԵԼՈՒ ԴԵՍ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԱՆՀՆԱՐԻՆՈՒԹՅՈՒՆԸ

98. Դիմողը պնդել է, որ ներպետական օրենսդրության հիման վրա՝ իր վարչական կալանքը թույլատրող որոշումը ենթակա չի եղել բողոքարկման: Այդ հիմքով նա պնդել է, որ այս առումով չի ունեցել իրավական պաշտպանության որևէ արդյունավետ ներպետական միջոց: Նա վկայակոչել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածը, որն ամրագրում է.

«Յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք»:

Այս գանգատն ընդունելի է հայտարարվել նաև Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո, համաձայն որի.

3. Յուրաքանչյուր ոք, ով ձերբակալման կամ կալանավորման պատճառով զրկված է ազատությունից, իրավունք ունի վիճարկելու իր կալանավորման օրինականությունը, որի կապակցությամբ դատարանն անհապաղ որոշում է կայացնում և կարգադրում է նրան ազատ արձակել, եթե կալանավորումն անօրինական է:

99. Կառավարությունն ընդունել է, որ ներպետական օրենսդրությունում նախատեսված չէ նման որոշման բողոքարկման հնարավորություն:

100. Դատարանը, նախ, վկայակոչում է վերը նշված հետևությունը, որ դիմողի վարչական կալանքը թույլատրող որոշումն ընդունվել է «օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից» 6-րդ հոդվածի գործողության շրջանակներում ընթացող դատավարությունում (տե՛ս վերը՝ 90 և 95 կետեր):

101. Դատարանը հիշեցնում է, որ սխալ դատական որոշման վերանայում խնդրելու իրավունքը չի ճանաչվում որպես ընդհանուր սկզբունք (տե՛ս *Delcourt v. Belgium*, 1970թ. հունվարի 17-ի վճիռը, Շարք A, թիվ 11, էջ 14, կետ 25): Թիվ 7 Արձանագրության 2-րդ հոդվածով այս իրավունքը նախատեսված է քրեական գործերի համար՝ բացառությամբ աննշան բնույթ կրող հանցագործությունների:

Այդուհանդերձ, դիմողը չի հիմնվել այս հոդվածի վրա և որևէ փաստարկ չի ներկայացրել առ այն, թե իր քրեական մեղադրանքը վերաբերում է «աննշան հանցագործության», թե՛ ոչ: Դատարանն անհրաժեշտ չի համարում սեփական նախաձեռնությամբ բարձրացնել այս հարցը:

102. 13-րդ հոդվածի վերաբերյալ Դատարանը գտնում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ 13-րդ հոդվածի համեմատ, *հատուկ կանոն* է, այլ կերպ՝ 13-րդ հոդվածի պահանջները նվազ խիստ են, քան 6-րդ հոդվածով նախատեսվածները, և դրանք այստեղ ներառված են (վերապահումներով՝ տե՛ս *Kamasinski v. Austria* 1989թ. դեկտեմբերի 19-ի վճիռը, Շարք A, թիվ 168, էջ 45-47, կետ 110): Որպես կանոն, 13-րդ հոդվածը չի կիրառվում այն դեպքերում, երբ Կոնվենցիայի ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել դատական քննության համատեքստում (տե՛ս *Pizzetti v. Italy*, 1993թ. փետրվարի 26-ի վճիռը, Շարք A, թիվ 257-C, էջ 40-41, կետ 41): Այս սկզբունքից միակ բացառությունն են կազմում 13-րդ հոդվածի ներքո գանգատները, որոնք վերաբերում են «ողջամիտ տևողության» պահանջի խախտմանը (տե՛ս *Kudla v. Poland* վճիռը [Մեծ պալատ], թիվ 30210/96, 146-149 կետեր, ECHR 2000-XI): Քանի որ սույն գործով այդ խնդիրն առկա չէ, ուստի 13-րդ հոդվածի առանձին խախտում տեղի չի ունեցել:

103. Իսկ ինչ վերաբերում է 5-րդ հոդվածի 4-րդ կետին, ապա Դատարանը նկատում է, որ դրա երաշխիքները սկզբունքորեն վերաբերելի չեն 5-րդ հոդվածի 1(ա) կետի ներքո կատարված ազատությունից զրկելուն, քանի որ ազատությունից զրկելու նկատմամբ դատական վերահսկողությունը պետք է որ արդեն իրագործված լինի սկզբնական դատապարտմամբ (տե՛ս *De Wilde, Ooms and Versyp v. Belgium*, 1971թ. հունիսի 18-ի վճիռը (ըստ էության), Շարք A, թիվ 12, էջ 40, կետ 76): Անդրադառնալով տվյալ գործի փաստերին՝ դիմողի հնգօրյա կալանքը բացառապես հիմնված է եղել դատավորի կողմից դատապարտվելու վրա, ուստի 5-րդ հոդվածի 4-րդ կետը չի պահանջում առանձին դատական մարմնի կողմից այդ որոշման վերանայում:

104. Հաշվի առնելով վերը նշվածը՝ Դատարանը հանգում է այն հետևության, որ այս գանգատն առանձին խնդիր չի հարուցում Կոնվենցիայի 13-րդ հոդվածի կամ 5-րդ հոդվածի 4-րդ կետի ներքո:

V. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

105. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն.

Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանն անհրաժեշտության դեպքում որոշում է տուժածին արդարացի բավարարում տրամադրել:

A. Վնասը

106. Դիմողը պահանջել է 100 000 եվրո ոչ նյութական վնասի համար՝ այն վնասվածքների և ապրումների կապակցությամբ, որոնք նա ունեցել է ոստիկանության կողմից իր նկատմամբ ցուցաբերված վատ վերաբերմունքի արդյունքում, այն տառապանքի կապակցությամբ, որը նրան պատճառվել է վարչական դատավարության ու նշանակված կալանքի, ինչպես նաև վատ վերաբերմունքի կապակցությամբ իր բողոքները իշխանությունների համապատասխան արձագանքին չարժանանալու հետևանքով:

107. Որպես նյութական վնասի հատուցում նա պահանջել է 25 ռուբլի՝ իր հնգօրյա կալանքի համար կալանավայրում գանձված գումարը:

108. Կառավարությունը որևէ կերպ չի մեկնաբանել դիմողի պահանջները՝ դա մասամբ պատճառաբանելով վատ վերաբերմունքի առթիվ շարունակվող քննությամբ, մասամբ էլ՝ կալանքի վերաբերյալ գանգատի հետ կապված՝ ներպետական պաշտպանության միջոցները չսպառելու իրենց առարկությամբ:

109. Դատարանը գտնում է, որ վերը պարզվեց, որ իշխանությունները խոշտանգել են դիմողին, այդ կապակցությամբ չեն իրականացրել արագ և հրապարակային քննություն՝ Կոնվենցիայի 3-րդ հոդվածին համապատասխան: Նաև հաստատվել է, որ նրան ազատությունից զրկել են 5-րդ հոդվածի խախտմամբ և 6-րդ հոդվածին հակասող ընթացակարգով: Եվ վերջապես, դիմողն ամիսներ շարունակ մեծ ջանքեր է գործադրել վատ վերաբերմունքի համար ներպետական միջոցներով փոխհատուցում ստանալու անհաջող փորձերի վրա: Դիմողը պետք է որ մեծապես տառապած և ընկճված լինի այս բոլոր հանգամանքների պատճառով: Հաշվի առնելով վերը նշված նկատառումները՝ Դատարանը վճռում է դիմողին տրամադրել 35 000 եվրո ոչ նյութական վնասի համար և 25 ռուբլի՝ նյութական վնասի համար՝ հավելած ցանկացած հարկային վճարում, որ կարող է կատարվել այդ գումարից:

B. Ծախսերը և ծախքերը

110. Դիմողը պահանջել է 5 000 ռուբլի՝ ծախսերի և ծախքերի համար, որոնք ինքը կատարել է ներպետական վարույթներում և Դատարանի առջև՝ ներառյալ զինանշանային տուրքը, թարգմանության, փոստային և գրեմական ծախսերը:

111. Կառավարությունը չի առարկել:

112. Այս պայմաններում Դատարանը գտնում է, որ դիմողի բողոքը պատճառաբանված է, ուստի տրամադրում է նրան 5 000 ռուբլի՝ ծախսերի և ծախքերի համար՝ հավելած ցանկացած հարկային վճարում, որ կարող է կատարվել այդ գումարից:

C. Տուգանային տոկոսները

113. Դատարանը նպատակահարմար է համարում, որպեսզի տուգանային տոկոսը գանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքի հիման վրա՝ հավելած երեք տոկոս:

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՋԱՅՆ

1. *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ վատ վերաբերմունքի կապակցությամբ,

2. *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 3-րդ հոդվածի խախտում՝ վատ վերաբերմունքի կապակցությամբ դիմողի արած հայտարարությունների հիման վրա արդյունավետ քննության բացակայության կապակցությամբ,

3. *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 13-րդ հոդվածի խախտում՝ վիճարկվող վատ վերաբերմունքի կապակցությամբ արդյունավետ միջոցների բացակայության առնչությամբ,

4. *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դիմողի ձերբակալման և ամբողջ գիշեր տևած կալանքի կապակցությամբ,

5. *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դիմողի հնգօրյա կալանքի կապակցությամբ,

6. *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,

7. *վճռում է*, որ անջատ վիճելի հարցեր չկան Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի և 13-րդ հոդվածի ներքո վարչական իրավախախտման համար տույժ կիրառելու որոշման բողոքարկման իրավունքի բացակայության կապակցությամբ,

8. *վճռում է*, որ՝

(a) պատասխանատու Պետությունը պետք է Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից երեք ամսվա ընթացքում վճարի դիմողին հետևյալ գումարները.

- (i) 25 (քսանհինգ) ռուբլի՝ նյութական վնասի համար,
- (ii) 35 000 (երեսունհինգ հազար) եվրո՝ ոչ նյութական վնասի համար, որը կփոխարկվի պատասխանող Պետության արժույթով՝ վճարման օրվա փոխարժեքով,
- (iii) 5 000 (հինգ հազար) ռուբլի՝ ծախսերի և ծախքերի համար
- (iv) ցանկացած հարկ, որը կարող է գանձվել վերը նշված գումարներից,

(b) վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետը լրանալուց հետո կատարելու դեպքում այդ ժամանակահատվածի համար պետք է վճարվի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության միջին տոկոսադրույքին՝ հավելած երեք տոկոս,

9. *մերժում է* արդարացի փոխհատուցման վերաբերյալ դիմողի մնացյալ պահանջները:

Կատարվել է անգլերենով և գրավոր հրապարակվել 2006թ. մարտի 9-ին՝ Ռատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն: